

Մօսկուսի կաթողիկոսին, եւ ձեռնտու եւ օգնական Սահակայ կաթողիկոսին. վասն որոյ գրեաց զարզայ, եւ մատոյց առաջի թագաւորին սուլթան Մուրատի որ ի նմին աւուրսն ի Կ.Պոլիս էր: Խնդիրք մեր հայազուն քրիստոնէիցս այս է ի թագաւորէն, զի շնորհեսցէ զհրաման կաթողիկոսութեան Սահակ կաթողիկոսին, զի հովուեսցէ մերովք օրինօք զամենեսեան քրիստոնեայս՝ որք իցեն ազգաւ Հայ . . . եւ թագաւորն ետ զհրաման եւ զթուղթ կաթողիկոսութեան Սահակին, որպէս եւ խնդրեաց Ջաքարիա Վ.ն. եւ զայս թուղթ իշխանութեան Ջաքարիա Վ.ն. ետ ցՊօղոս Վ.ն. եւ առաքեաց առ Սահակ կաթողիկոսն, եւ պատուիրեաց ոչ թուլանալ եւ ոչ կասուլ ի չարեաց դիտաւորութեանցն՝ այլ ջանալ եւ աշխատիլ մինչեւ ցկատարումն . . .» (Առաքել Դավրէժացի, Գիրք Պատմութեան, ՅԱմսթէլօդամում, 1669, էջ 238—9. Չամչեան, Գ., 606): Սահակ եւ Պօղոս յետոյ Յամիթ գացին մեծ Եպարքոս Խոսրով փաշային, որպէս զի գործադրել տան թագաւորական հրովարտակը. սակայն Եպարքոսը կաշառուելով Մովսէս կաթողիկոսի կողմնակիցներէն, բրածեծ ըրաւ երկուքն ալ, ստիպելով որ հաւատքն ուրանան, եւ հազիւ կաշառքով ազատեցան: Ասոնց մասին Սիմէոն Սեբաստացի կաթողիկոսն Սոյ՝ առ Փիլիպ. կաթողիկոսն Էջմիածնի, որ այս գործին մէջ Մովսէս կաթողիկոսին նուիրակն էր, կը գրէ (վերոյիշեալ Յանդիմանագրին մէջ) « . . . զՋաքէոս